

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Շուշան Խաչատրյան

Ցեղասպանությունն աղետ է, որը ժամանակակից մարդկության ամենաքննարկվող ֆենոմենների շարքում է դասվում: Բացի պատմագիտական ուսումնասիրություններից, Հայոց ցեղասպանությանն անդրադարձ է կատարվում հոգեբանական գիտության կողմից, դիտարկվում է հայոց պատմության փիլիսոփայության համատեքստում, գրականագիտությունն ուսումնասիրում է Մեծ եղեռնի գրական արտացոլումը հայ և արտասահմանյան գրողների երկերում: Նշված տեսանկյուններից կատարված ուսումնասիրությունները շատ կարևոր են ու անհրաժեշտ: Մակայն այդ կարգի հետազոտությունների կողքին նաև հատուկ ուշադրություն պետք է դարձնել Մեծ եղեռնի աստվածաբանական ուսումնասիրության հարցին, որի կարիքն զգացվում է շատ վաղուց: Եղեռնը կատարվել է քրիստոնեություն դավանող ժողովրդի հետ ու պահանջում է թե՛ աստվածաբանական, թե՛ կրոնագիտական քննարկում:

Այս հոդվածում հակիրճ կներկայացվեն մի կողմից կրոնապատմագիտական ուսումնասիրությունների, մյուս կողմից՝ աստվածաբանական տեսական վերլուծությունների նյութ հանդիսացող և ցեղասպանություն երևույթին առնչվող որոշ օրակարգային թեմաներ: Ստորև պայմանականորեն առանձնացված են 2 խմբեր՝ կրոնապատմագիտական և աստվածաբանական՝ իրենց ենթակետերով: Պետք է ընդգծենք, որ հոգեբանությունը, փիլիսոփայությունը, քաղաքագիտությունը, մշակութաբանությունը և մարդաբանությունն աստվածաբանությանը և կրոնագիտությանն օժանդակող գիտակարգեր են, որոնց սահմաններում կատարված հետազոտությունները հնարավորինս համակողմանիորեն նպաստում են ցեղասպանության՝ որպես երևույթի ուսումնասիրմանը:

### 1. ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԿՐՈՆԱՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

Կրոնապատմագիտական ուսումնասիրությունները վերաբերում են հետևյալ՝ առաջին հայացքից իրարից անջատ, սակայն միևնույն ֆենոմենի կրոնագիտական կողմին առնչվող ոլորտներին.

#### **ա) Ոչնչացումը, սպանությունները կրոններում. դիցաբանական համակարգերից մինչև համաշխարհային կրոններ**

Դիցաբանական մտածելակերպը բարդ, կոմպլեքս երևույթ է: Բացի հեքիաթների, լեգենդների, մետաֆորիկ կերպարների և հերոսների աշխարհ լինելուց, դիցաբանական մտածողությունը կրոնագետները, մարդաբանները, հոգեբանները և այլք արժևորել ու արժևորում են որպես տվյալ ժողովրդի հոգեբանության արքետիպային, որպես ազգի ինքնության հենակետային փուլ<sup>1</sup>: Այնպես որ, եթե ցանկանում ենք

<sup>1</sup> Տե՛ս Jung Carl G., *The Archetypes and the Collective Unconscious*, Princeton University Press, 1990, pp. 156, 172; Ellwood Robert, *The Politics of Myth. A Study of C. G. Jung, Mircea Eliade and Joseph*

պարզել ցեղասպան գաղափարների հիմքը, անհրաժեշտ է նաև հետադարձ հայացք նետել տվյալ ազգի կրոնական՝ սկզբնական, դիցաբանական համակարգին, թուրքերի դեպքում՝ մինչմիաստվածային կրոնի առանձնահատկություններին. ինչպիսի՞ հերոսներ է ունեցել այդ ժամանակ, արդյոք ազգի իդեալ համարվող հերոսները եղել են արդարության մարտիկներ՞, թե՛ ագրեսիվ ուժի մարմնավորումներ:

Հանրահայտ է, որ և՛ բազմաստվածային, և՛ միաստվածային կրոններն անխտիր ունեն հատուկ բարոյական նորմեր: Յուրաքանչյուր կրոնի մեջ աշխարհայացքային վերաբերմունքն այլ կրոնների ներկայացուցիչների հանդեպ կարող է լինել և՛ բացասական, ընդհուպ նրանց ոչնչացնելու կոչերը, և՛ դրական, ինչպես, օրինակ, գթասիրտ լինելը մարդկանց հանդեպ: Բարոյականության դերի ուսումնասիրությունը տվյալ կրոնում կարող է լույս սփռել ցեղասպանազիտական ուսումնասիրությունների վրա:

#### **բ) Քանանի ազգերի ցեղասպանությունը**

Այժմ աստվածաբանական լայն քննարկումների առարկա է դարձել Քանանի յոթ ազգերի ոչնչացման խնդիրը հրեաների կողմից: Բուն աստվածաբանական հարցն այստեղ այն է, թե ինչպես կարող է համատեղվել հինկտակարանյան 10 պատվիրանների կրոնը, որտեղ սահմանվում է «Մի՛ սպանիր»-ը, այժմյան Իսրայելի և Պաղեստինի տարածքում Բ. ա. ապրող տեղաբնիկների՝ պարբերաբար իրականացվող ոչնչացման հետ: Ինդրի մասին խոսվում է հենց Հին Կտակարանում, Քանանի ազգերի կոտորածները պատմականորեն ապացուցվում են հնագիտական պեղումներով (պահպանված սեպագրերով, հնագույն տաճարների ու կոթողների շնորհիվ և այլ փաստերով)<sup>2</sup>:

#### **գ) Թուրքական իսլամը և Հայոց ցեղասպանությունը: Կրոնների բախումը**

Կրոնազիտական վերլուծությունները քննարկում են իսլամ-քրիստոնեություն առճակատումը Հայոց ցեղասպանության ընթացքում: Կրոնների բախումը ցեղասպանության մեջ ակնհայտ է և խթանող կարևորագույն գործոններից մեկն է: Պետք է ընդգծել, որ Հայոց ցեղասպանությունը կրոնական հողի վրա կատարված ցեղասպանությունն չէ, սակայն կրոնական առճակատումը և կրոնական այլադավանությունն այն կարևորագույն գործոններից էին, որ հանգեցրին ցեղասպանության իրագործմանը:

Այս համատեքստում պետք է ուսումնասիրել՝ ինչպես կրոնը քաղաքական խավի կողմից օգտագործվեց որպես բախում առաջացնող միջոց: Իսլամի գաղափարախոսությունն իր բնույթով չի կարող անջատ լինել պետությունից ու քաղաքականությունից, հետևաբար նաև՝ պատերազմներից, զինված բախումներից: Օսմանյան կայսրության սուլթանը նաև *խալիֆ* էր՝ բոլոր մուսուլմանների կրոնական առաջնորդը, իսկ իսլամը կայսրության պետական կրոնն էր մինչև Թուրքիայի Հանրա-

*Campbell*, State University of New York Press, 1999, pp. 24, 33, 129, 176.

<sup>2</sup> Տե՛ս Тагглевский И.Р., *История Израиля и Иудеи до разрушения Первого Храма*, СПб., 2005, стр. 51, 80; Kiernan B., *Blood and Soil: A World History of Genocide and Extermination from Sparta to Darfur*, Yale University Press, 2007, pp. 2-3.

պետության՝ աշխարհիկ պետության հռչակումը (1923-ին): Ազգային պատկանելությունը որոշվում էր դավանանքով:

Այս նյութի լուսաբանումը կարող է ընթանալ հետևյալ հարցերի ուսումնասիրության միջոցով.

1. իսլամի յուրահատկությունը թյուրքական մշակութային տարածքում,
2. իսլամական մարդաբանությունը, բարոյագիտությունը, *ջիհադը* և Հայոց ցեղասպանությունը,
3. իսլամի ի՞նչ կրոնական ուղղություններ կային Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանության տարիներին. սուֆիական-միստիկ ուղղությունները և նրանց դերակատարությունն Օսմանյան կայսրության քաղաքականության և հասարակական կյանքի մեջ (*նակշիբանդի, մելեհի, բեկթաշի* միաբանությունները):

**դ) Կրոնական փոքրամասնությունների հանդեպ երիտթուրքերի վարած քաղաքականությունը և Մեծ եղեռնը, նրանց կրոնական պատկանելության հարցերը, որդեգրած գաղափարախոսությունը**

Մերօրյա ցեղասպանագետ Բեն Կիերնանը գրում է. «Չնայած բոլոր երեք ռեժիմները (երիտթուրքականը, նացիստականը և խմերը- Շ. Խ.) աթեիստական էին, բոլորն էլ թիրախավորեցին հատկապես կրոնական փոքրամասնություն հանդիսացող ազգերին...»<sup>3</sup>: 1914 թվականի նոյեմբերի 14-ին Օսմանյան կայսրության հոգևոր առաջնորդը՝ *շեյխ- ուլ-իսլամը*, արձակեց *Ֆեթվա*<sup>4</sup> հրովարտակ, որով կոչ էր արվում աշխարհի բոլոր մուսուլմաններին *ջիհադի* դուրս գալ ընդդեմ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի: Հրովարտակը միանշանակ չընկալվեց ամբողջ իսլամական աշխարհում, քանի որ շատերն այն ընդունեցին որպես երիտթուրքերի քաղաքական ուտոպիաների արդյունք: Ջիհադի այս հայտարարությունն այն խթանն էր, որը երիտթուրքերի հաշվարկով պետք է մոլեզնեցներ իսլամադավան արմատականներին այն կայսրության տարածքում, որտեղ դարերով դժվարին փոխհարաբերություններ էին հաստատվել քրիստոնյա տեղաբնիկ ազգերի և իսլամ ընդունած թյուրքական քոչվորների սերունդների միջև:

Երիտթուրքերի գաղափարախոսական կորիզը կարելի է համարել աթեիզմը՝ չմոռանալով նրանց կողմից որդեգրված օժանդակ գաղափարախոսությունները, ինչպիսիք էին՝ պոզիտիվիզմը, կենսաբանական մատերիալիզմը, սոցիալական դարվինիզմը և այլն: Երիտթուրքերը սեփական գաղափարները ձևավորելիս, ի

<sup>3</sup> Kiernan Ben, “Twentieth-Century Genocides: Underlying Ideological Themes from Armenia to East Timor”, in *The Specter of Genocide: Mass Murder in Historical Perspective*, ed. by Robert Gellately & Ben Kiernan, Cambridge University Press, 2003, p. 29.

<sup>4</sup> *Ֆեթվա* - (արաբ. թարգմ.՝ «որոշում») – իսլամական կրոնաիրավական որոշում՝ կայացված բարձրագույն հոգևոր հեղինակություն ունեցող անձի (*մուֆթիի, դադիի, շեյխ ուլ-իսլամի*) կողմից: Յուրաքանչյուր կարևոր պետական կամ հասարակական կյանքին վերաբերող որոշում կայացնելուց առաջ *Ֆեթվա* ստանալը միշտ պարտադիր պայման է եղել: 1914-ի նոյեմբերի 14-ին թողարկված *Ֆեթվան* գրվել էր հակիրճ՝ թվով 5 հարց ու պատասխանի տեսքով, այն *ջիհադի* էր կոչում բոլոր մուսուլմաններին՝ ընդդեմ Աստանտի երկրների ու նրանց համակիրների՝ սեփական հավատը և իսլամական «խալիֆայությունը» պաշտպանելու պատրվակով:

թիվս այլոց, օգտվել էին հատկապես պոզիտիվիզմի հիմնադիր փիլիսոփա Օգյուստ Կոնտի<sup>5</sup> և սոցիալական հոգեբան Գյուստավ Լը Բոնի<sup>6</sup> տեսություններից:

### ե) Հայերի կրոնափոխության հարցը ցեղասպանության տարիներին

Նախորդ երկու ենթակետերի հետ անմիջական առնչություն ունի ցեղասպանության տարիներին հայերի բռնի կրոնափոխության երևույթը: Բռնի կրոնափոխությունը՝ որպես ցեղասպանության գործիք, գատում է Հայոց ցեղասպանությունը մյուս՝ մի շարք ցեղասպանություններից:

Այս խնդիրը մշակութային ցեղասպանության մաս է: Այս ենթակետի շրջանակներում կրոնափոխությունը պետք է ուսումնասիրվի ամենայն մանրամասնությամբ՝ ծեսը, կրոնափոխ եղածների սոցիալական ինտեգրման փուլերը, կրոնասոցիալական նշանակությունն ու հետևանքները Հայոց ցեղասպանության ընթացքում և հետագայում:

## 2. ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ցեղասպանությունը ներառում է և՛ մարդկային էթնիկական չարը, և՛ կրոնական չարը: Այս առումով Հոլոքոստի աստվածաբանական մեկնաբանությունները շատ են. աստվածաբանական աշխատանքներ են սկսվել տպագրվել անմիջապես Հոլոքոստից և Իսրայելի պետության վերականգնումից (1948 թ.) հետո: Հոլոքոստի աստվածաբանությունն առանձին մտածողների տեսակետների համախումբն է, իսկ այդ տեսակետները տարբեր հեղինակների մոտ հաճախ իրարամերժ են լինում, հետևաբար աստվածաբանական միահամուտ տեսակետ գոյություն չունի<sup>7</sup>: Հարցերը, որոնք արծարծվում են Հոլոքոստի մասին աստվածաբանելիս, բազմաթիվ են ու առնչվում են հրեական աշխարհայացքի հիմքերին, որտեղ կրոնը՝ հուղայականությունը, առանցքային տեղ է զբաղեցնում:

Նախորդ դարի հիսունական թվականներից սկսած՝ մեծ աղմուկ բարձրացրեց «Աստծու մահվան» մասին աստվածաբանությունն ու համապատասխան արձագանքներ ունեցավ փիլիսոփայության մեջ<sup>8</sup>: Այս տեսությունն առաջադրողներից

<sup>5</sup> Օգյուստ Կոնտ (1798-1857), ֆրանսիացի փիլիսոփա, պոզիտիվիզմի և սոցիոլոգիայի՝ որպես ինքնուրույն գիտության, հիմնադիրն է: Պոզիտիվիստական համակարգն անջատում է գիտությունը մետաֆիզիկայից և աստվածաբանությունից, հասարակությունը խիստ դասակարգված է ներկայացվում, որի զարգացման հիմքը «պոզիտիվիստական եկեղեցու հոգևոր այրերի» կողմից մշակված պոզիտիվիստական բարոյագիտությանն է:

<sup>6</sup> Գյուստավ Լը Բոն (1841-1931), ֆրանսիացի հոգեբան, սոցիոլոգ, մարդաբան և պատմաբան: Հանրաճանաչություն ձեռք բերեց մարդկային բազմության, ամբոխի հոգեբանության ուսումնասիրություններով: Հիմնական մտքերը վերաբերում են ամբոխի հոգեբանությանը՝ որպես կարևոր քաղաքական ու սոցիալական միավորի, արական սեռի դոմինանտությանը, ինչպես նաև նկարագրել է ամբոխի վրա ազդելու մեթոդները:

<sup>7</sup> Հոլոքոստի «աստվածաբանության» մասին ավելի մանրամասն տե՛ս մեր ավելի վաղ տպագրված հոդվածում. Խաչատրյան Շ., Ինչպե՛ս դիտարկել ցեղասպանությունն աստվածաբանության տեսանկյունից, «Էջմիածին», ԺԲ, 2012, էջ 15-18:

<sup>8</sup> «Աստծո մահվան աստվածաբանությունը» ռադիկալ աստվածաբանություն է, որի ներկայացուցիչներն էին նաև Պոլ վան Բորենը, Ուիլյամ Համիլտոնը, Ջոն Ռոբինսոնը, Թոմաս Ալտիցերը, Ջոն

էր հայազգի բողոքական, ռադիկալ աստվածաբանության ներկայացուցիչ Գաբրիել Վահանյանը (1927-2012), ով ցեղասպանությունը վերապրած ծնողների զավակ էր և ծանոթ էր Եղեռնի գործած դեստրուկտիվ ազդեցությանը ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական ու հոգևոր մակարդակներում: Նա առաջադրեց այն գաղափարը, որ ժամանակակից աշխարհը «հետքրիստոնեական» (անգլ. post-Christian) դարաշրջան է ապրում: Անդրադառնալով մարդու աշխարհընկալման և բարոյական փոփոխություններին և այդ ամենի մեջ Աստծու ներկայության գաղափարին՝<sup>9</sup> Վահանյանը կարծում է, որ մշակույթը կորցրել է ամեն տեսակ «սրբազան» տարր, իսկ ժամանակակից մարդու գիտակցության մեջ «Աստված մահացել է»: Հոլոքոստի առաջին աստվածաբաններից մեկը՝ Ռիչարդ Ռուբենշտայնը (ծն. 1924), այս ուղղությունից ազդված, իր «Օսվենցիմից հետո» գրքում կարծում է, որ հրեաների Աստվածը մահացել է, Նա այլևս հոգ չի տանում իր ազգի մասին, հետևաբար, ըստ նրա, իմաստ չունի ո՛չ աղոթելը, ո՛չ Պասեք տոները, քանի որ դա այն տոնն է, որը խորհրդանշում է Աստծու հոգածությունը հրեա ժողովրդի հանդեպ. Հոլոքոստի ժամանակ Աստված, իբր, չհոգաց, մոռացավ իր ազգի մասին: Ըստ նրա՝ «Աստված Մուրբ Չգոյ է»՝ անտարբեր արարածի ճակատագրի հանդեպ. դա, ըստ Ռուբենշտայնի, հատկապես երևաց Հոլոքոստի ժամանակ<sup>10</sup>:

Հոլոքոստի առավել հայտնի աստվածաբաններից է Էլիզեթ Բերկովիցը (1908–1992): Բերկովիցի աստվածաբանությունը կարելի է կոչել պատմափնաստափրական, քանի որ իր «Հավատքը Հոլոքոստից հետո» գրքով նա փորձում է ուրվագծել Աստծո միջամտելը մարդկության պատմությանը, իսկ տեղի ունեցող մարդածին աղետները պարզապես մարդու ազատկամային բացասական դրսևորումներն են: Հրեաների կոտորածը ամենևին էլ հակասեմական պոռթկում չէր, այլ, ինչպես նա է համոզված, նացիստների մետաֆիզիկական վախն էր «իշխանություն չունեցող» Աստծուց, որը միաժամանակ ներկա է պատմության ընթացքում<sup>11</sup>: Նացիստները, այդպիսով, վախենում էին հրեաների պարադոքսալ Աստծուց և ցանկանում էին վերացնել այդ Աստծու «վկաներին»՝ հրեաներին:

Աստվածաբանական հարցերը, որոնց ծրագրվում է հատուկ ուշադրություն դարձնել, վերաբերում են և՛ հուդայական աստվածաբանությանը, և՛ հրեա-քրիստոնեական երկխոսությանը, և՛ Մեծ եղեռնի թեոլոգիային: Աստվածաբանական հարցերը, որ առաջադրում է ցեղասպանությունը, հետևյալն են.

---

Կապուտոն, ռաբբի Ռիչարդ Ռուբենշտայնը և Պիտեր Ռոլինզը : Այս ուղղությունը գաղափարական հիմքեր է քաղել Դիոնիսիոս Արիոպալագու, Նիկողայոս Կուզանացու, Մայստեր Էկհարտի, Հովհան Խաչի աստվածաբանական գործերից, ինչպես նաև Ֆրիդրիխ Հեգելի և Ֆրիդրիխ Նիցշեի փիլիսոփայությունից:

<sup>9</sup> Տե՛ս Vahanian Gabriel, *The Death of God: The Culture of Our Post-Christian Era*, Wipf & Stock Publishers, 2009.

<sup>10</sup> Տե՛ս Rubenstein Richard L., *After Auschwitz. History, Theology, and Contemporary Judaism*, Johns Hopkins University Press, 1992.

<sup>11</sup> Berkovits, Eliezer in [http://www.jewishvirtuallibrary.org/jsource/judaica/ejud\\_0002\\_0003\\_0\\_02688.html](http://www.jewishvirtuallibrary.org/jsource/judaica/ejud_0002_0003_0_02688.html): Լրացուցիչ տե՛ս Morgan Michael L., *Beyond Auschwitz, Post-Holocaust Jewish Thought in America*, Oxford University Press, 2001, pp. 109-118:

### ա) Ցեղասպանության թեոլոգեան

Ցեղասպանության ուսումնասիրությունը կատարվում է **թեոլոգեայի**<sup>12</sup> և՛ աստվածաբանական, և՛ փիլիսոփայական հայեցակարգերի հետ համատեղ: Այն հարցերից, որոնք քննվում են այս ուսմունքի շրջանակներում, մի քանիսը հետևյալն են. «ինչպե՞ս կարող է մարդու աշխարհայացքը նույնը մնալ ցեղասպանությունից հետո», «արդյո՞ք նույնը պետք է մնա մարդու մասին ընկալումը», «ի՞նչ կատարվեց Աստծո Արդարադատության ուսմունքի հետ», «ինչո՞վ կարող է օգնել թեոլոգեայի ցանկացած փորձ այն բանից հետո, երբ չարը իրեն դրսևորեց որպես աներևույթ հզոր ու անկախ ուժ», «ինչպե՞ս հասկանալ չարի դիալեկտիկ դերակատարումը աշխարհում», «ինչպե՞ս բացատրել Աստծու սարսափեցնող լույթությունը կոտորածի ժամանակ» և այլն: Այս հարցերն իրենց թե՛ փիլիսոփայական, թե՛ աստվածաբանական ուղղվածությամբ ստանում են պատասխաններ ամենատարբեր տեսանկյուններից<sup>13</sup>:

### բ) Զոհի կամ զոհաբերության աստվածաբանություն<sup>14</sup>. զոհաբերության իմաստը ցեղասպանության մեջ

Պատմագիտության, հոգեբանության, իրավագիտության բնագավառներում «զոհ» բառը, եզրը, ունի տվյալ ոլորաներին բնորոշ բացատրություն: Օրինակ՝ հոգեբանության մեջ առանձին բնագավառ՝ *վիկտիմալոգիան* զբաղվում է զոհի վարքի, նրա կրած հոգեբանական ձևափոխությունների ուսումնասիրություններով, իրավաբանության մեջ քրեագիտության առանձին կատեգորիա է զոհը: Սակայն բառի ծագումը հուշում է, որ ոլորտը, որին պատկանում է բառը, կրոնականն է: Նույնը կարող ենք ասել նաև «հոլոքոստ» եզրի մասին, որի ոլորտը ևս կրոնականն է՝ ամբողջովին այրվող՝ ողջակիզման ենթարկվող զոհը, որը կատարվում էր Սողոմոնի տաճարում<sup>15</sup>: Սակայն «զոհ» բառն օգտագործելիս պետք է լինել առավելա-

<sup>12</sup> Նախընտրում ենք օգտագործել «թեոլոգեայ» հունարեն եզրը (կազմված է հուն. Θεός՝ «Աստված», և δίκη՝ «արդարություն», «իրավունք», բառերից) հայերեն «աստվածաբարարացում» մոտավոր թարգմանության փոխարեն:

<sup>13</sup> Թեոլոգեայի մասին խոսվում է Հայոց ցեղասպանությունը վերապրածների վկայություններին վերաբերող հետևյալ գրքում՝ Miller D., Miller L.; *Survivors: Oral History of the Armenian Genocide*, University of California Press, 1993, pp. 177-186.

<sup>14</sup> Զոհի կամ զոհաբերման աստվածաբանությանը (անգլ. “theology of sacrifice”) կարելի է ծանոթանալ հետևյալ հոդվածում. Daly Robert J., *New Developments in the Theology of Sacrifice*, in *Liturgical Ministry 18* (Spring 2009), Ohio, Institute for Liturgical Ministry at Maria Stein Center, pp. 49-58: Լրացուցիչ տե՛ս Eberhart Christian A., *The Sacrifice of Jesus: Understanding Atonement Biblically*. Minneapolis: Augsburg Fortress, 2011:

<sup>15</sup> «Հոլոքոստ»-ը ծագում է Ὀλοκαύτωμα հունարեն բառից, որը նշանակում է «ողջակիզում»: Խոսքը վերաբերում է Ղևոս. Ա. 3-17, Զ. 1-6, 8-13 համարներում նկարագրված զոհաբերության կարգին, երբ զոհաբերվող կենդանին այրվում էր ամբողջությամբ: Անվանումը ծագում է ԴՆՄ «օլա» եբրայերեն բայից, որը նշանակում է «բարձրանալ», «վեր հասնել»: Հին Կտակարանի Ղևոսացվոց գրքում չեն նշվում այն հանցանքները, որոնց պատճառով պետք է մատուցվեր այս տեսակի զոհը, սակայն այն պետք է մատուցելին մարդիկ, ովքեր չէին կատարել դիտավորյալ հանցանք, այլ անզգուշորեն էին մեղք գործել: Արու զոհն ամբողջությամբ այրվում էր՝ բացի մորթուց և այրունից: Կարևոր պայման էր, որ զոհաբերողը ձեռքը դնէր կենդանու վրա՝ որպես խորհրդանիշ այն բանի, որ իր մեղքերը փոխանցում է կենդանուն:

գույնս զգույշ, որպեսզի «գոհ» ասելիս պիտակավորման կամ արժևորման երևույթ չնկատվի: Այս դիտանկյունից խնդիրն ուսումնասիրելն իր բնույթով ֆենոմենոլոգիական է և չի ենթադրում տուժող կողմին որպես հավերժական գոհ ներկայացնելը:

**գ) Կաթոլիկ և բողոքական միսիոներների աստվածաբանական խորհրդածությունները հայերի կոտորածների մասին**

Միսիոներները, որոնք Եղեռնի ականատեսն են եղել, աչքի են ընկնում համամարդկային ճգնաժամի հատուկ ընկալմամբ՝ այդ երևույթը կապելով առաջին հերթին կրոնական և բարոյական ճգնաժամի հետ: Նրանց օրագրերում կարելի է գտնել բազմաթիվ խորհրդածություններ՝ համեմված յուրօրինակ պատմափիլիսոփայությամբ, դեպքերը կապելով քրիստոնեական ընդհանուր վախճանաբանությամբ հատուկ ուսմունքների հետ: Հաճախ, եթե անգամ միսիոները կամ միսիոներուհին իր դավանաբանական պատկանելության մասին ոչինչ չի հաղորդում, կարելի է դրա մասին պատկերացում կազմել նրա յուրահատուկ աստվածաբանական դիրքորոշումից, որն արտացոլվում է օրագրի էջերում: Ականատես լինելով Հայոց ցեղասպանության վայրագություններին՝ նրանցից շատերը համոզված են, որ հայերը նահատակվում են քրիստոնյա լինելու պատճառով, իսկ դեպքերը հաճախ ընկալվում են որպես աշխարհի վախճանի նշաններից մեկը: Նրանց հուշերում մեջբերվում են Աստվածաշնչից համարներ՝ անելով համեմատություններ հայերի կրած տառապանքների հետ (Հայտն. 12.11, Հուդիթ 8:15, Առակ. 3:12, Սաղմ. 125:5)<sup>6</sup>, ուշադրություն են դարձնում ցեղասպանությունն իրականացնողների կողմից սպանություններին ծիսական երանգավորում հաղորդելու դեպքերին, ընդգծում կրոնափոխ ջիներու հայերի հաստատականությունը: Այս իմաստով արքա Ժյուլ Շապետոնի, Մարիա Յակոբսենի, Ալմա Յոհանսոնի, Բոդիլ Բյոռնի, Ռութ Փարմլիի, Հենրի Ռիզզի և բազում այլ միսիոներների վկայություններն անգերազնահատելի են:

**դ) Զանգվածային սպանությունների իմաստաբանությունը (սեմանտիկան), կապը կրոնական նշանաբանության հետ**

Այս ենթակետի նյութը կարող են դառնալ հետևյալ ասպեկտները՝ իրենց սիմվոլիկ կրոնահոգեբանական և սեմանտիկ վերլուծություններով.

1. վայրերը (անապատ, գետ, դաշտ, բնակավայրից դուրս հանվելը և այլն),
2. ձևերը (կտտանքներ, խաչելություն, ծիսական սպանություններ, մահվան շարժակազմ, բռնաբարություն և այլն):

**ե) Եղեռնի զոհերի սրբադասման հարցեր**

Հոլոքոստի ժամանակ սպանված հրեաներն ուղղադավան հուդայական հեղինակների կողմից «կեղոշիմ»-ի (եբր. «սրբեր»)՝ հանուն հավատի մահացածների,

<sup>6</sup> Զոմներ Էռնստ, *Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին*, Ե., 2002, էջ 9, 75: Տե՛ս օրինակ Մարիա Յակոբսենի օրագրության դանիերեն բնագիրը. Ճեյքոպսըն Մարիա, Օրագրություն 1907-1919 Խաբբերդ, Ալթիլիսա, 1979, էջ 747-748:

հասկացության մեջ չեն դասվում<sup>17</sup>։ Հուրբոստի ընթացքում մահացան հրեաներ՝ լինելով թե՛ աթեիստներ, թե՛ հուդայականներ, թե՛ քրիստոնյաներ։ Մակայն Մեծ եղեռնի ընթացքում շատ հայեր որպես քրիստոնյա նահատակվեցին՝ մերժելով կրոնափոխությունը, որն առաջարկվում էր հայերին՝ որպես մահվանն այլընտրանք։ Հայ առաքելական եկեղեցու վերջին սուրբը Գրիգոր Տաթևացին (1346-1409) է, որին Հայ եկեղեցին սրբադասել է Կիրակոս Ա Վիրապեցի (1441-1443) կաթողիկոսի գահակալության ժամանակ։ Հայ նահատակների քրիստոնեական սխրանքի շուրջ պետք է կատարվեն աստվածաբանական մեկնաբանություններ՝ մանրակրկիտ աղբյուրագիտական վերլուծություններով։

#### գ) Մեծ եղեռնի աստվածաբանական վերլուծությունները

Եթե «ցեղասպանությունը» իրավական լեզվով հանցանքների հանցանք է կոչվում, ապա աստվածաբանության լեզվով այն «մեղքերի մեղք» կարելի է կոչել, քանի որ ներառում է բոլոր մեղքերը և դրանց հետևանքները։ Հայոց ցեղասպանությունը աստվածաբանության դիտանկյունից փորձել են նայել հետևյալ աստվածաբանները։ Հայր Համազասպ Գլընճյանն իր աստվածաբանական կարծիքն է արտահայտել Գաբրիել Վահանյանի «Աստծո մահվան» տեսության շուրջ<sup>18</sup>։ Հայր Լևոն Զեքիանն ունի մեկնագրություն՝ նվիրված հայ ինքնությանը,<sup>19</sup> և Հայոց ցեղասպանության բարոյագիտական և աստվածաբանական հարցերին առնչվող հոդվածներ<sup>20</sup>։ Վիգեն Գուրոյանը Վիրջինիայի համալսարանի աստվածաբանության դասախոս է. նա դիտարկում է Եղեռն - Եկեղեցի - ժողովուրդ զուգահեռները<sup>21</sup>, «Ինչպե՛ս մենք պետք է հիշենք» հոդվածների ժողովածուի մեջ խոսում է ազգի կրած հոգեբանական ու հոգևոր ճգնաժամերի շուրջ, անցում կատարում

<sup>17</sup> Այս տեսակետը կիսում են նաև սիոնիզմը՝ որպես հրեա ազգի վրա «ծանրացած մեղք» ընկալող ուղորարօթողոքս ուրբիները։ Մանրամասն տե՛ս ПилкинГон С. М., Иудаизм, Москва, Файр-пресс, 2001, стр. 346:

<sup>18</sup> Տե՛ս Գլընճյան Հ. Համազասպ, *Աստվածայեզական յողարկատրը*, «Բազմալէպ», հայագիտական-բանասիրական-գրական հասրես, թիւ 1-2, Վենետիկ – Ս. Ղազար, 1975, էջ 202-223:

<sup>19</sup> Տե՛ս Զեքիան Հ. Պողոս-Լեոն, *Հոգիի եւ ինքնութեան հեպքերով*, Երեւան, 2000:

<sup>20</sup> Տե՛ս հետևյալ հոդվածները՝ Zekiyani Boghos Levon, “Quale rapporto tra la definizione giuridica e la realtà storica dei genocidi?” in *La memoria del Male. Percorsi tra gli stermini del Novecento e il loro ricordo*, a cura di Paolo Bernardini, Diego Lucci, Gadi Luzzato Voghera, CLEUP, Padova 2006, pp. 182-206; Zekiyani Boghos Levon, “Metz yeghern, il genocidio armeno, Paradigma di sradicamento e di esilio irreversibile” in *Nel Suo Nome. Conflitti, riconoscimento, convivenza delle religioni*, EDB, Bologna 2005, pp. 213-224; Zekiyani Boghos Levon, “Dal «tehcir» al genocidio. Riflessioni sul «Metz Yeghern» armeno a partire dal negazionismo del governo turco” in *La violenza contro la popolazione civile nella grande guerra. Deportati, profughi, internati*, a cura di Bruna Bianchi, Ed. UNICOPLI, Milano 2006, pp. 349-364; Zekiyani Boghos Levon, “Riflessioni sulla trasposizione semantica del concetto di “giusto” nel contesto del “Metz Yeghern” armeno, in *Si può sempre dire un sì o un no: I Giusti contro i Genocidi degli Armeni e degli Ebrei*, Convegno Internazionale, Padova, 30 novembre-2 dicembre 2000, pp. 216-243; Boghos Levon Zekiyani, “Reflections on Genocide: The Armenian Case: A Radical Negativity and Polyvalent Dynamics”, published in *Annali di Ca’ Foscari*, XXXVII, 3, 1998 (Serie orientale 29), pp. 223-241.

<sup>21</sup> Տե՛ս Guroian Vigen, *Armenian Genocide And Christian Existence* file://localhost/E:/Cross%20Currents/Armenian%20genocide%20and%20Christian%20existence.htm:



հայոց պատմության փիլիսոփայությանը, ինչպես և Սփյուռքում ցեղասպանությունը հիշելու և վկայակոչելու երևույթին<sup>22</sup>: Գրական և փիլիսոփայական գուգահեռներով հողված է տպագրել Վենետիկի Մխիթարյան միաբան Հայր Գրիգորիս Սիրանյանը<sup>23</sup>: Եղեռնի մասին խոսել է նաև անգլիկան աստվածաբան Ֆլորա Քեշգեգյանը<sup>24</sup>:

**Է) Հայոց ցեղասպանությունը, Հայ եկեղեցին և ազգային ինքնության պահպանման խնդիրները XXI դարում**

XXI դարն իր մարտահրավերներով հայ ազգային ինքնությանն անչլող բազմաթիվ հարցեր է առաջադրում: Էթնիկ ինքնության հարցը հայերիս համար արդեն մեկ դար է, ինչ ուղիղ կապ ունի Եղեռնի հետ: Յեղասպանության հետևանքով մեծ ավերածություն եղավ ոչ միայն ֆիզիկական մակարդակում, այլև հոգեկան և հոգևոր մակարդակներում: Հայերի ինքնագիտակցականը փոփոխություններ կրեց, որոնք իրենց ազդեցությունն ունեցան նաև հոգևոր կերտվածքի վրա<sup>25</sup>: Յեղասպանության հետևանքով վնասվեց նաև քրիստոնեական հավատքը. թե՛ Սփյուռքում, թե՛ Հայաստանում պատկերը գրեթե չի տարբերվում: Խիստ ստոապանքն ազդեցություն է գործում կրոնական հավատքի վրա: Ունանք ծայրահեղ աթեիստ են, մյուսները փորձում են տրամաբանական պատճառներ գտնել, թե ինչո՞ւ Աստված չմիջամտեց՝ կանխելու վերահաս աղետը «քրիստոնյա ազգի»<sup>26</sup> նկատմամբ: Մեկ այլ դեպքում էլ տեսնում ենք հավատի ձևափոխում, որի մոտիվացիան հետևյալն է. Աստված չուզեց դադարեցնել աղետը, հետևաբար հայ ժողովուրդն արժանի էր դրան, ինչպես և ամենատարբեր բացատրություններ ու կարծիքներ: Այս բոլոր հարցադրումներն ու պատասխաններն այն խոր վիշտն են արտահայտում, որը չի հաղթահարվել, որն ուղեկցվում է վիրավորանքով, փնտրում է պատասխաններ թե՛ բանականի, թե՛ գերբնականի սահմաններում: Հետաքրքիր է, որ հայերը, գիտակցելով հանդերձ երիտթուրքերի ոճրագործ լինելը, չեն բավարարվում դրանով, ու երբեմն էլ կարելի է կարծել, որ թուրքերը հայերիս այս հոգեվերլուծական մտահայեցումների հետ ընդհանրապես կապ չունեն,

<sup>22</sup> Տե՛ս Guroian Vigen, *How Shall We Remember? Reflections on the Armenian Genocide and Church Faith*, (ԲԱՆ ԵՒ ԳԻՐ ՄԱՍԵՆԱՇԱՐ, ԹԻՒՒ 3), Montreal, 2005, տե՛ս նույնը նաև՝ Guroian Vigen, *How shall we remember?* <http://web.archive.org/web/20050220164111/http://sain.org/WINDOW/Genoci3.txt> կայքում:

<sup>23</sup> Տե՛ս Siranian R., *Dov'era Dio? Una lettura spirituale del genocidio armeno*, Il Regno, n. 4, 2007, [http://www.ilregno.it/it/rivista\\_articolo.php?RID=0&CODICE=48051](http://www.ilregno.it/it/rivista_articolo.php?RID=0&CODICE=48051) :

<sup>24</sup> Տե՛ս Keshgegian Flora A., *Redeeming Memories: A Theology Of Healing And Transformation*, Nashville, Abingdon Press, 2000 մենագրությունը:

<sup>25</sup> Սփյուռքահայ հոգևորան Մելինե Գարագաշյանը հետևյալ դիտարկումն է կատարում. «Անհատի հոգեցնցումը անհատով չի սահմանափակվում, փոխանցվում է ընտանիքի անդամներին, շրջապատին: Իսկ եթե մի ամբողջ ժողովուրդ է հոգեցնցման ենթարկվում, հատկանիշներն անցնում են սերնդից սերունդ, հաճախ արտահայտվում վրեժի պոթոթկումով: Այդ պատճառով են ցեղասպանության երկրորդ սերնդի շատ նորածիններ Վրեժ, Վրեժուհի անուններով մկրտվել» (Գարագաշյան Մ., *Յեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը*, Երևան, 2006, էջ 71):

<sup>26</sup> Այս արտահայտությունը կարելի է չափերսների մեջ վերցնել, քանի որ ազգն ամբողջությամբ չի կարող լինել քրիստոնյա: Հետևաբար այս արտահայտությունը մեզ թույլ ենք տալիս օգտագործել՝ դիտարկելով ազգը որպես իր մեծամասնությամբ քրիստոնյա, որը քրիստոնեական քաղաքակրթության մի մասն է և քրիստոնեական մշակույթի կրողը:

քանի որ հայերը նրանց գիտակցաբար դուրս են թողնում այդ շրջանակից: Մղում կա՛ պարզելու քրիստոնյա հայի ու Աստծու հարաբերությունները, գտնելու պատասխաններ բազմաթիվ «ինչո՛ւ»-ների, որոնք շատ հաճախ վերապատմական են:

Հոդվածում համառոտ ներկայացվեցին այն հիմնական կետերը, որոնք պահանջում են կրոնագիտական և աստվածաբանական ուսումնասիրություն: Յեղասպանությունները կանգնած են ներկայիս մշակութային ու կրոնական ճգնաժամերի հիմքերի մոտ՝ մարտահրավեր նետելով մարդու գործունեության ցանկացած ոլորտի: Յեղասպանությունը կապված է ուտոպիստական առաջընթացի տեսիլքների ու հեղափոխականության, բարոյական անկման և կրոնական-աշխարհայացքային տարբերությունների հետ: Մարդկության ճգնաժամի հետ կապված այս երևույթը պետք է լինի աստվածաբանության և կրոնագիտության ուսումնասիրության նյութ հանդիսացող առաջնային հարցերից:

### **Հայոց ցեղասպանությունը կրոնագիտության և աստվածաբանության համատեքստում**

*Շուշան Խաչատրյան*

#### **Ամփոփում**

Հոդվածի մեջ անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության աստվածաբանական և կրոնագիտական ուսումնասիրություններին: Առանձնացված են երկու գլխավոր թեմաներ՝ պատմակրոնագիտական և աստվածաբանական՝ իրենց ենթակետերով ու դրանց համապատասխան համառոտ նկարագրությամբ: Պատմա-կրոնագիտական ուսումնասիրությունների նյութ են Քանանի ազգերի կոտորածը (որի մասին խոսվում է Հին Կտակարանում), ցեղասպանությունների ընթացքում կրոնների բախումը. կա՛ր արդյոք կրոնների քաղաքակրթական բախում, որի հետևանքով տեղի ունեցավ ցեղասպանությունը (իսլամի և քրիստոնեության օրինակով): Երկրորդ խումբը վերաբերում է աստվածաբանական ուսումնասիրություններին՝ ներառելով զոհաբերության և զոհի աստվածաբանության որոշ հարցեր, չարի հիմնախնդրի և թեոդիցեայի աստվածաբանական վերլուծություն ցեղասպանության թեմայի շուրջ, ցեղասպանության զոհերի սրբադասման հարցերը և ցեղասպանությունից հետո ազգային ինքնությանն առնչվող որոշ թեմաներ:

**Քանակի բառեր՝** ցեղասպանության աստվածաբանություն, կրոնափոխություն, մեղքերի մեղք, չարի հիմնախնդիրը, թեոդիցեա, սրբադասում:

## **The Armenian Genocide in the Context of Religious Studies and Theology**

*Shushan Khachatryan*

### **Summary**

The article deals with some interpretations of the phenomenon of genocide in terms of theology and religious studies. The article is an introductory description of the religious studies and theological research of genocides. The issues are classified under two main groups with its points: historical-religious and theological. The first group touches some questions of human massacres in the pagan religions, the stories about the slaughter of indigenous nations of Canaan reflected in the Old Testament, some issues on religious conversions and clashes of the religions that might lead to genocides (the principal pattern is Islam and Christianity). The second group includes some aspects of theology of sacrifices, problem of evil and theodicy, a discussion of canonization of the victims of the Armenian Genocide and some questions of the Armenian national identity after the Genocide.

**Keywords:** genocide theology, conversion, sin of all sins, problem of evil, theodicy, canonization.

## **Геноцид армян в контексте религиоведческих и теологических исследований**

*Шушан Хачатрян*

### **Резюме**

Изложены некоторые положения исследования феномена геноцида в рамках теологии и религиоведения. В первой группе представлены некоторые ключевые стороны исследования историко-религиозных аспектов геноцида, вторая группа описывает несколько положений теологического истолкования геноцида армян. В религиоведческой части речь идет о проблеме истребления языческих народов ближневосточного исторического Ханаана, о котором упоминается в Ветхом Завете, проблема религиозной конверсии, столкновения религий (в частности - ислама и христианства) во время геноцида армян из-за цивилизационного различия. Теологические истолкования геноцида армян вмещают аспекты теологии жертвы, проблемы зла и теодицеи, вопросы канонизации жертв геноцида и национальной идентичности армянского народа после геноцида.

**Ключевые слова:** теология геноцида, религиозная конверсия, грех грехов, проблема зла, теодицея, канонизация.